

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς. Редакция «Мшак».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարվում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

ԱՌԱՋԻԿԱՅ 1893 ԹԻՎԱԿԱՆԻՆ

21-ՐԻ ՏԱՐԻ

21-ՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդայով: Մենք ստանում ենք սեփական շնորհակալութիւններ.
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԿԱՆԱԿԱՆ (Խմբագրական և Բաղադրական Բաժնի) անկումում, Թամաշևսկի տանը: Կայտարարութիւնները քաղաքային «ՄՇԱԿ» գրքերում համար պէտք է գրվել հետևեալ հասցեով. ТИФЛИСЬ. Редакция газеты «МШАК». Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK». Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպեկ. «Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմյանիս լրագրիչների յայտարարութիւնները, մասնաւորապէս կը տպագրվեն հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնաւորապէս տպագրվում առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագրչի-հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐՅՈՒՆԻՆ

Երկուշաբթի, դեկտեմբերի 14-ին, Թիֆլիսի Արքեպիսկոպոսական Թատրոնում, ՀԱՅ ԳԵՐԱՍՏԱՆԱԿԱՆ Մշտական Խումբը կը ներկայացնէ

Ի ՆՊԱՍՏ Պ. ԱՂԱՅԵԱՆՅԻ

Ի Ա Ք Ա Ք Ա Ն Ա

Կոմէդիա 4 գործ. և վեց պատկ. հեղին. Գ. Սուրբուհիանցի:

ՊԱՌԱՒԸ ՀԱՆԱՔ Ե ՍՆՈՒՄ

վարձով 1 գործ. հեղ. Ա. Կ.

Պ. Աղայեան կը կարգայ «Փառք Աստուծոյ»:

Սկիզբն է 7 1/2 ժամին երկուրեւ: Տեղերի գները սովորական են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այս տարի ինչ ենք կատարել.—Ներքին Տեսչութիւն. Բաղադրական նոր կանոնադրութիւնը մտցնելու առիթով: Հայոց ներկայացուցիչները. Հայկական երեկոյթի Պատկերասրահը. Կրթական գործը Նոր-Բայազետում. Նամակ Բաղրուշէ. Նամակ Ա. Խաղաղութեան. Նամակ Զաքարիայային. Նամակ Խաղաղութեան. Ներքին լուրեր.—ԱՍՏԱՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատմական հարցի առիթով. Մի լրագրական ընկերութիւն. Հայ մշակչի Ամերիկայում. Չինաստանի դիտարկութիւնը. Երկաթուղու դիմ Տրապիզոնից Երբուսի. Գարձաւ բողոքական սահմանադրութեան մասին. Նամակ Պարսկաստանից.—ՀԱՆԱԿԱՆՆԵՐ.—ՏԵՂԵԿԱՅԻՆՑ.—ՍՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՅՍ ՏԱՐԻ ԻՆՉ ԵՆՔ ԿԱՏԱՐԵԼ

Ներկայ 1892 թիւը թէ՛ և առհասարակ շատ չարաբաղդ տարի էր, բայց մի և նոյն ժամանակ շատ հարուստ էր այլ և այլ թէ՛ չար և թէ՛ բարի արկածներով: Այդ պատճառով իր կոչման բարձրութեան վրա կանգնած, պարսաճանաջ հայոց լրագիրը կարող էր մեծ գործ կատարել ներկայ տարւոյ ընթացքում:

Տարին սկսվեց մի մեծ աղետով՝ ջրօրհնէրի կամուրջի խորանկվելով և բազմաթիւ մարդկանց ջրի հոսանքին զոհ գնալով: Սակայն այդ աղետն ունէր և իր բարի հետեւեալը, այն է հասարակութեան ինքնաճանաչութեան զգացմունքի զարթոյնը, որն արտայայտվեց առատ նկերական նուէրներով, որոնք ընտանիքների օգտին: «Մշակը» արտայայտվեց զանազան թշուառների կարիքների, կարողացաւ կարճ ժամանակամիջոցում մօտ 5000 ռուբլի ժողովել յօղւոտ կարօտեալներին:

Մի քանի ժամանակից յետոյ սկսվեցան Թիֆլիսի թեմում ընտրութիւնները ծխական պատգամաւորների, որոնց իրանց կողմից պիտի ընտրվեն թեմական կաթողիկոսական պատգամաւորներ: Այդտեղ էլ մեր լրագիրը յանձն առաւ ղեկավարելու հասարակաց կարծիքը, ուղղութիւն տալու ընտրութիւններին, առաջարկելով իր խմբագրին թեմա-

կան պատգամաւորի պաշտօնի համար, մի և նոյն ժամանակ ծանօթացնելով իր ընթերցողներին իր պրօպագանդի հետ, կաթողիկոսական հարցի վերաբերմամբ: Որպէս ինքնաճանաչների կաթողիկոսական գաղչի վրա «Մշակը» դրեց երկու անձնաւորութիւնների անուններ՝ Մկրտիչ Խրիմեանի և Արիստակէս Սեդրակեանի անունները: Եւ ահա այդ երկու անունների դրօշակի տակ կատարվեցան բոլոր պատգամաւորական ընտրութիւնները Թիֆլիսի թեմում, որոնք և վերջացան «Մշակի» խմբագրի ընտրութեամբ: Ընտրողական այդ ամբողջ պայքարը վերջացաւ մայիսի սկզբներում, Ս. Էմիլիանովի խրթմանի ընտրութեամբ:

Ընտրութիւնների վերջանալուց յետոյ սկսում են տարածվել երկրին մէջ չարագուշակ լուրերը. Պարսկաստանից դէպի մեր կողմերը սկսում է տարածվել խօչբան: Այդտեղ էլ «Մշակը», աշխատելով իր գործունէութեամբ միշտ համապատասխան լինել ժողովրդի օրվայ կարիքներին, անմիջապէս սկսում է մի գործի արշաւանք խօչբանի դէմ: Իր առաջնորդող յօղւածներով նա ջանում է սիրտ, հոգի տալ ժողովրդին, բացատրել նրան թէ խօչբան այնպիսի թշնամի է, որը դեմ պէտք է կուսել և ոչ թէ ընկճվել նրա առջև, նախատում է այն մարդկանց, որոնք փախչում են խօչբանից, որպէս թուլամորթ զինուորներ, որոնք փախչում են պատերազմի դաշտից, մեր լրագրի խմբագրութեան անդամներն են և առհասարակ մշակականներն են գլխաւորապէս, որոնք գործնական կերպով հայոց հասարակութեան միջոց, աշխատում են թէ Թիֆլիսում և թէ ուրիշ տեղերում հօղւոյ ժողովրդի մասին, հիմնել ձրի թէյսաներ և ճաշարաններ և կառավարել այդ ժամանակաւոր հաստատութիւնները: Մի և նոյն ժամանակ «Մշակը» բացի իր առաջնորդող յօղւածներից, որոնցով մենք ջանում էինք քաջալերել հասարակութիւնը, ղեկավարել ամբողջ, տալիս է ընթերցողներին խօչբանի տեղութեան ժամանակ, հմուտ բժշկականների ձեռքով դրված՝ օգտուէտ բժշկական

խրատներ պարունակող յօղւածներ, խօչբանայի դէմ առողջապահական միջոցներով աշխուժեցնելու մարտերում համար: Հազիւ անցնելու, թուլանալու վրա էր խօչբան, երբ օգոստոս ամսին հայոց ազգին հասաւ մի այլ տեսակ դժբաղդութիւն. դա մեր բանաստեղծ Բախայէլ Պատկանեանի մահն էր: Այդտեղ էլ «Մշակին» վերջապէս օգնութեան ձեռք կարկառել հանգուցելու որբացած ընտանիքին. մի վեց ամսվայ ընթացքում «Մշակը» կարողացաւ 3500 ռուբլի ժողովել հանգուցեալի ընտանիքի օգտին:

Մենք չենք խօսում այստեղ դրամական աւելի մանր հանգանակութիւնների մասին, որոնք այս տարի կատարվեցան «Մշակի» միջնորդութեամբ, չենք խօսում և այն հասարակական, երկրորդական խնդիրների մասին՝ թատրոնի, հոգային հարցի, պանդխտութեան, բանուորների, մահմետական տարրի անշարժութեան և այլ խնդիրների վերաբերմամբ: Գրված բազմաթիւ յօղւածների մասին, որոնց մէջ մենք արտայայտեցինք մեր վաղեմի համոզմունքների անշեղ դաւանանքը: Չենք յիշատակում այստեղ ներկայ տարվայ ընթացքում և մեր յայտնած մշտեքերը՝ եկեղեցական հարցի վերաբերմամբ և մեր տարած ընդարձակ բանավարժ լրագրական հակառակ բանակի դէմ՝ տեղական հարցի վերաբերմամբ:

Այսպէս թէ այսպէս, անցնող 1892 թիւը այնքան հարուստ է եղել այլ և այլ խնդիրներով, այնքան բազմալուծմանի և միմեանցից տարբեր խնդիրների լուծման ասպարէզ առաջարկեց մեզ, որ «Մշակի» քսան տարվայ գոյութեան ընթացքում մենք չենք յիշում 1892 տարվայ նման մի տեսնալի տարին...

Թէ որչափ աշխուժեցանք մենք տարանք մեր գործը այդ օտարախելի տարվայ ընթացքում, որչափ աշխուժեցանք առաջ տանք ընտրողական ամբողջ պայքարը, որչափ աշխուժեցանք առաջնորդելով հասարակաց կարծիքը ներկայ տարվայ ծանր աղետների ժամանակ, վերջապէս որչափ իր կոչման համեմատ, որպէս մամուլի օրգան, «Մշակը» ներկայ ծանր տարվայ ընթացքում կանգնած էր իր կոչման բարձրութեան վրա, այդ բոլորը մենք թողնում ենք մեր ընթերցողների անաչառ դատողութեանը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՂԱՔԱՅԻՆ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՅՅՆԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

Չորեքշաբթի, դեկտեմբերի 9-ին, որպէս հաղորդում է «Кавказ» լրագիրը, քաղաքային գործերի վերաբերեալ նախագահական ատեստում կայացաւ ատեսանի անդամների նիստը՝ մասնակցութեամբ քաղաքային փոխնապոյթ Պ. Խլմայովի, որը, նոր քաղաքային կանոնադրութեան համեմատ, նորերս վերոյիշեալ ատեսանի անդամ նշանակվեց: Նիստը նուիրված էր այն հարցին որ, պէտք է վերալիշեալ կանոնադրութիւնը մտցնել թէ՛ այն քաղաքներում, ուր այդին գործադրում է հին կանոնադրութիւնը, և թէ՛ այն քաղաքներում, որոնք դեռ ևս ինքնակառավարի չունեն: Քաղաքային նոր կանոնադրութիւնից բերված այն քաղաքներին, որոնք տպվում էին լրագրիչներում, կարելի էր կարծել, որ գոյութիւն ունեցող դուռների վաղորդութիւնները պէտք է շարունակվեն մինչև որոշեալ ժամանակամիջոցի լրանալը, հետեալոր Թիֆլիսի գումայի ժամանակամիջոցը լրանալու էր 1895 թիւ յունվարի 1-ին: Սակայն պ. նախագահական ատեսանը իսկական չլիքերականից երևում է, որ նոր կանոնադրութիւնը նախագահական քաղաքներում պէտք է մտցնել 1893 թիւին

և յետաճողներ կարող են լինել միայն այն դէպքում, եթէ այդ քաղաքները չեն կարողանալ անհրաժեշտ նիւթ պատրաստել ընտրողների քանակութեան մասին, չեն կարողանալ տպագրել ընտրողական ցանկեր և այլն: Քաղաքային նոր դուռն կաղմակերպելու համար լինելի աշխատանքների դանաղան կողմերը քննելուց յետոյ, քաղաքային գործերի վերաբերեալ նախագահական ատեսանը որոշեց՝ պատրաստել մօտաւորապէս ճիշդ նիւթ սոյն ղեկավարների 14-ի համար, երբ և պէտք է վճարվեն այդ գործին վերաբերեալ հարցերը: Ի միջի այլոց ներթական կը դառնայ և այն հարցը, թէ երբ պէտք է քաղաքային կանոնադրութիւնը մտցնել Ստեփան, Թէլաւ և Գուշէթ քաղաքներում, ուր եկող տարի պէտք է պօլիցիայի ձեռքից առնել քաղաքային ատեստավարութիւնը: Այդպիսով մենք եկող տարւոյ զայնանը ընտրողական ատեստաններ կունենանք: Պէտք է փոփոխել Թիֆլիսի, Ախալցխայի և Գորս քաղաքային վարչութիւնների ու դուռնների կաղմակերպութիւնը, և պէտք է ինքնավարութիւնն ստանան Ստեփան, Թէլաւ և Գուշէթ քաղաքները:

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՆԵՐԸ

Գնկտեմբերի 10-ին, հայոց դերասանական խումբը կրկնեց Զուգեղմանի «Պատիւ» կոմէդիայի ներկայացումը, այս անգամ թարգմանութեամբ պ. Ղարաբեկեանի:

Հակառակ մեր սպասածին, ընդհանրապէս ներկայացումը աղոյ չանցաւ: Մեղ այնպէս թվաց, որ առաջին անգամ ամբողջ խումբը աւելի սրտով, աւելի աշխույժով էր խաղում:

Գերերի մէջ այս անգամ երկու փոփոխութիւն կար. օրիւրը Ամայի դերը կատարեց տ. Մէլիքեան, ոչ այնքան աշխուժեցանք, իսկ տ. Զարեկ, որ առաջին անգամ կատարել էր օրիւրը Ամայի դերը, այս անգամ խաղաց տիկին Միւլիքիւի փոքրիկ դերը, և չը փչացրեց խաղը:

Պ. Պետրոսեան կամ Տրատի դերը առաջին անգամ աւելի աշխույժ և աւելի աղղու անցկացրեց, քան թէ երկրորդ անգամ. իսկ պ. Աբելեան ընդհակառակը, այս երկրորդ ներկայացման, իր նյութալի դերում աւելի ուժգին տպուորութիւն թողեց, և ցոյց տուեց որ առաջին փորձից նա օգուտ է քաղել:

Գալով թարգմանութեան, պէտք է նկատել, որ այս անգամ էլ, ինչպէս և առաջին թարգմանութեան մէջ, նկատվում էին լեզուի անհարթութիւններ: Մի տարօրինակ բան. երկրորդ գործողութեան մէջ թարգմանական լեզուն, որով խօսում էին դերասանները, անհամեմատ աւելի թույլ էր, քան երկրորդ և չորրորդ գործողութիւնների մէջ, որոնց լեզուն բաւական կոկի և սահուն էր: Չը գիտենք ում վերագրել այդ բանը, արդեօք դերակատարներին թէ թարգմանչին: Այդանոր միայն պարզ նկատվել էր, որ դերասաններից ոմանք խօսում էին նախկին թարգմանութեան լեզուով, իսկ ոմանք, նոր թարգմանութեամբ, և այդ պատճառով հարց և պատասխանի մէջ յաճախ աններդաստիքութիւն էր երևում:

Խորհուրդ ենք տալիս թարգմանիչներին աւելի մշակելով «Պատիւ» պիէսայի թարգմանութիւնը, տպագրել այդ պիէսան, որովհետեւ Զուգեղմանի այդ դրուածքը այնքան արժանաւոր է, որ նրան ունենալը մեր գրականութեան մէջ, շատ ցանկալի է:

ՀԱՅԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԵՐՈՐԻՈՒՄ

«НОВОСТИ» լրագրում կարդում ենք հետեւեալը. «Այսօր, դեկտեմբերի 2-ին, աղետականների ժողովարանի զանգնում կայացաւ հայկական բարեգործական և բնական իրավաստ չքաւոր հայերի: Երեկոյթի բարեգործական լինելը ահա-

Типографія Канцел. Главннач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 143